

թիւնները։ Օրինակ՝ պ. Ե. Թ. ասում է, որ «հին ժամանակներում նրանք (այսինքն՝ Հայերը) գործ էին ածում մի տեսակ պայմանական-իերոգլիֆական նշաններ»։ Որոնց մի քանի նմուշները մնացել են մինչև մեր օրերը (?)։ Զգիտենք թէ այդ ի՞նչ իերոգլիֆների մասին է հեղինակի խօսքը։ Մեր հին մատենագրութիւնը ոչ միայն «աղքատիկ» չէ, այլ բաւական հարուստ է։ Ո՞րտեղից է հեղինակը վերցրել, որ «Մեսրոպ անունը առաջ է եկել պարսկական միւշրիֆ բառից»։ Իսկ Մաշտոց յունական ծագում ունի և նշանակում է բարձրութիւն։ Այս տեսակ սխալները սովորական են պարոն Ե. Թ.-ի աշխատութեան մէջ, և ընդհանրապէս՝ հին Հայոց կեանքին, պատմութեանը և գրականութեանը վերաբերեալ դասագրքերը կամ Հանրամատչելի ընթերցանութեան Համար կազմուած գրքոյ կները՝ Համարեա բոլորն էլ գժրախտաբար նոյն թերութիւններն ունին։

Յ. Մ.



## Սացուած գրեր

1. Լումայ, երկամնեայ Հանդէս. № 1. 1902. Յունուար. Թիֆլիս։

2. Кавказский Вестникъ, годъ III, 1902, январь. Тифлисъ.

3. «Էմինեան Աղքագրական Ժողովածու», Հրատ. Կազմական Ճեմարանի Արեւելեան Աւոգուաց. Հատոր Բ. Ժողովրդական վեպ և Հեքեաթ, Հաւաքեց Ա. Հայկունի. Մոսկուա-Վաղարշապատ. 1901 (զինն է 1 ր. 25 կոպ.)։

4. Къ вопросу о порядке производства брачныхъ дѣлъ въ армяно-григоріанской церкви. С. Т.

5. Մեսրոպ Մաշտոց. կազմեց Ե. Թ., Հրատ. Յովհաննէս. Ալեքսանդրապոլ, 1901 թ., զինն է, 5 կ.։

6. Յեօրնաօն, կազմեց Ե., Թոփչեան, Հրատ. Յովհաննես Արամեանցի, Ալէքսանդրապոլ, 1901 թ., գինն է 10 կուգ.:

7. Մահմետ կազմեց Ե., Թ., Հրատ. Յովհաննես Արամեանցի, Ալէքսանդրապոլ, 1901 թ., գինն է 7 կուգ.:

\* \*

Խմբագրութիւնս խոնարհարար խնդրում է հեղինակներին և հրատարակիչներին բոլոր գրքերը ուղարկել խմբագրութեան հասցեով (Ժշմանակ՝ Թշուածան). Ռեակցիա «Արարատ»): Ամեն մի սահյուած գրքի համար կը յիշուի Արարատում:

Հոգեոր գողրանոցների վարչութիւններից, երեցիոխներից, բարեգործական ընկերութիւններից և այլ հիմնարկութիւններից խնդրում է, որ իրանց տողագրուած հաշիւներից մի մի օրինակ ուղարկեն խմբագրութեան հասցեով:

Նորին Վեհափառութեան հրամանով այս համարից սկսած՝ Արարատը հրատարակում է նոր դիրքով:

